ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 4-ին, հինգշաբթի, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, դասախոսական կազմի գլխավորությամբ, ուխտի գնաց Ս. Գեղարդի վանքը։

* *
*

Հունիսի 4-ին, հինգշաբթի, Մայր Տաճար այցելեցին Մոսկվայում սովորող օտարերկրացի մի խումբ ուսանողներ, Բուլղարիայից հինգ արվեստագետներ, Ճապոնիայից մամուլի մի խումբ աշխատողներ, Պրագայի ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի աշխատակիցներ։

* *
*

Հունիսի 4-ին, հինգշաբթի, ութամսյա երկար, ծանր հիվանդությունից և վիրաբուժական գործողությունից հետո ապաքինված, Վեհափառ Հայրապետին այցելեց Գերագույն Հոգևոր Խորհրդի հնագույն անդամ պրոֆ.-դոկտ. Առաքել Առաքելյանը։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Վեհափառ Հայրապետի, իր խնդակցությունը հայտնելով հարգելի պրոֆեսորի ապաքինման ուրախ առիթով, նրան քաջառողջություն է բարեմաղթում։

* *
*

Հունիսի 7-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագին ներկա էին նաև մի խումբ ռումինահայ ուխտավորներ։

* *
*

Հունիսի 7-ին, կիրակի, կեսօրից հետո Մայր Տաճար այցելեցին մի խումբ հույն ժուռնալիստներ, բժիշկներ և ինժեներներ, որոնք ընդունվեցին նաև Վեհափառ Հայրապետի կողմից։

Ավելի ուշ Մայր Տաճար այցելեցին նաև ՅՈՒՆԵՍԿՈՒ-ի քարտուղար տր. Ռոժե Գեյվանը և իր հարգելի տիկինը։

* *
*

Հունիսի 13-ին, շաբաթ, «Գիւտ Նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ»։ Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի առաջ, պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

* *
*

Հունիսի 13-ին, շաբաթ, Մայր Տաճար այցելեցին մի խումբ լեհ ճարտարապետներ, պրոֆմիության ղեկավարներ Հարավսլավիայից և Մակեդոնիայից, ինչպես նաև ժուռնալիստների մի խումբ ԳԴՌ-ից։

* *
*

Հունիսի 14-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը՝ «Հովուին հսկողի՝ ճշմարիտ և քաջ հովուի պատկերին՝ հովիւքն եղեն հետևողք, զոր ամփոփեցին զմարմինս մեր ի յայրն Մանեայ» շարականի խոսքերի բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագին ներկա էին նաև բազմաթիվ ուխտավորներ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և Հունաստանից։

Հավարտ սուրբ պատարագի, ուխտավորները ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից Վեհարանում։

* *
*

Հունիսի 14-ին, կիրակի, կեսօրից հետո Մայր Տաճար այցելեցին մի խումբ չեխ և գերմանացի (ԳԴՌ-ից) արվեստագետներ և այլ հյուրեր։

* *
*

Հունիսի 17-ին, շաբաթ, Մայր Աթոռի միաբանությունը միօրյա պտույտի մեկնեց դեպի Արագածի լանջերը։

* *
*

Հունիսի 17-ին, շաբաթ, կեսօրից հետո Վեհափառ Հայրապետին այցելեց ուխտավորաբար Մայր Հայրենիքում գտնվող երիտասարդ կինոռեժիսյոր Հայկ Մարտիրոսյանը, Պրագայից։

* *
*

Հունիսի 18-ին, հինգշաբթի, «Տօն սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ»։

Առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռի միաբանությունը և Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը ուխտի գնացին Օշական՝ Ս. Մեսրոպի շիրմին, որտեղ ժամը 11-ին, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան եկեղեցում, սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը «Նմանեալ Մովսեսի» շարականի բառերի բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն Վահան Ամատունի հայ իշխանի, հայ մշակույթի և դպրության բոլոր վաստակավորների և Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու վերանորոգության բարերարներ Ղազարոսյան գերդաստանի ննջեցյալների հիշատակին։

* *
*

Հունիսի 21-ին, կիրակի, «Գիտ տփոյ Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը՝ «Արդ, ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* *
*

Հունիսի 23-ին, երեքշաբթի, Մոսկվա մեկնեց Պրագայում գումարվելիք Եկեղեցիների համաշխարհային համաքրիստոնեական խաղաղության համաժողովին մասնակցող Հայ Եկեղեցու պատվիրակությունը, որի կազմումն են գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը (պատգամավորության ղեկավար), Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան ծայրագույն վարդապետ Տերյանը, Մայր Տաճարի փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը, Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը։

* *
*

Հունիսի 28-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը և քարոզեց «Եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։